ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ ФИЛОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF ARMENIAN PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Աբովյան 52ա Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52а 52a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5
ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ 2025 Թ. ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչի ընտրություն:
2. Առկա ուսուցման 2024-25 ուստարվա բակալավրիատի ավարտական աշխատանք-ների պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություն:
3. Առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստավորում:
4. Հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծարագրերի ղեկավարների հաշվետվություն:
5. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ի հարցի Ֆակուլտետի դեկան, դոց. Ա. Գալստյանը նախ ներկայացրեց ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը, այնուհետև տեղեկացրեց, որ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել է 1 թեկնածու՝ բ. գ. թ., դոցենտ Սեյրան Զավենի Գրիգորյանը: Ֆակուլտետը ստացել է թեկնածուի գործը, փաստաթղթերը ամբողջական են, նախապես տեղի է ունեցել նաև ամբիոնի նիստ, որտեղ կայացել է քվեարկություն: Ամբիոնի նիստի քվեարկության արդյունքները, ինչպես նաև թեկնածուի գործերը ներկայացնելու համար խոսքը տրվեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանին: Պրոֆ. Ա. Աբաջյանը ընթերցեց մրցութային հանձնաժողովի նիստի արձանագրությունը, որում մասնավորապես նշված էր.

ԼՍԵՑԻՆ - Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմած թեկնածուի հարցը: Նիստը վարում էր հայ

բանասիրության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ , բ. գ. դ., պրոֆ. Ա. Աբաջյանը:
Նշվեց, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար դիմել է բ. գ. թ., դոցենտ Սեյրան Զավենի Գրիգորյանը: Մայիսի 30-ին կայացած նիստում ամբիոնի որոշմամբ տեղի է ունեցել բաց քվեարկություն, որին մասնակցած յոթ ամբիոնակիցներն էլ կողմ են քվեարկել և դոցենտ Ս. Գրիգորյանին երաշխավորել մասնակցելու հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

Նշվեց, որ Ս. Գրիգորյանը 1987-ից աշխատում է նույն ամբիոնում, 2015-2025թթ. ղեկավարել է այն՝ այդ ընթացքում դրսևորելով գիտամանկավարժական հմտություններ: Զգալի ավանդ ունի գիտական կադրեր պատրաստելու գործում:
Գրիգորյանը ակտիվորեն մասնակցում է ֆակուլտետի գիտական և ուսումնական կյանքին: Վերջին հինգ տարիների ընթացքում նրա նախաձեռնությամբ ամբիոնում կատարվել է կրթական ծրագրերի բարելավում, բակալավրիատում և մագիստրատուրայում ներդրվել են նոր դասընթացներ:
Իր պաշտոնավարման ժամանակահատվածում կազմակերպել է հանրապետական 6 գիտաժողովներ, շարունակել «Չարենցյան ընթերցումներ» և «Մաթևոսյանական ընթերցումներ» հոբելյանական նստաշրջանների ավանդույթը:
Վերջին ութ տարիների ընթացքում Գրիգորյանը հրատարակել է 3 մենագրություն, որոնցից վերջինը տպագրվել է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի դրամաշնորհով:
Գրիգորյանը լավագույն գործընկեր է և սիրված դասախոս:
Մայր բուհի 100-ամյակի առթիվ նա պարգևատրվել ԵՊՀ Ոսկե մեդալով:
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ - Հիմք ընդունելով վերոգրյալները՝ մրցութային հանձնաժողովը որոշեց դոցենտ Սեյրան Զավենի Գրիգորյանին երաշխավորել մասնակցելու հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

Այնուհետև ծրագրային ելույթի համար խոսքը տրվեց թեկնածուին:
Բ. գ. թ., դոցենտ Սեյրան Գրիգորյանը իր ելույթում մասնավորապես նշեց.
Առաջիկա հինգ տարիներին նախատեսում ենք շարունակել գիտակրթական գործունեության այն ուղղությունները և սկզբունքները, որոնք արմատավորվել են ամբիոնի հիմնադրման օրից և պահպանվել ու զարգացել վերջին տասը տարիներին:
Բակալավրիատում շարունակելու ենք խորացնել և զարգացնել 1920 թվականից այս կողմ ընկած հայ գրականության գլխավոր պարբերաշրջանների դասավանդումը: Դրանց երեք բաղադրիչներն են հայ նորագույն գրականության երեք թևերը՝ 1920-40-ական թթ. հայաստանյան գրականությունը, սփյուռքահայ գրականությունը և տասնամյակներ

շարունակ «Արդի հայ գրականության պատմություն» կոչված շրջանը, որը եկող ուսումնական տարում վերջապես կանվանափոխվի և կկոչվի «20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականություն»։ Բացի այդ՝ ուսումնական ծրագրերի թարմացման միտումով ամբիոնը մտցրել է նոր առարկա՝ «Բանասիրական աշխատանքի հիմունքներ»։ Նախատեսվում է բարեփոխել բակալավրիատի 2-րդ կուրսում վարվող այդ դասընթացը՝ շեշտը դնելով գրականագիտական աշխատանքների տեխնիկական ձևավորման և գրքերի խմբագրման ու հրատարակության սկզբունքներին վերաբերող իրողությունների վրա։ 2022 թ. վերակազմավորման արդյունքում կատարվեց ամբիոնի անվանափոխություն, և այն կոչվեց հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն։ Դրանով մեզ վերադարձվեցին ի սկզբանե ամբիոնի ուսումնական ծրագրում ընդգրկված այն դասընթացները, որ վերաբերում են հայ քննադատական մտքի պատմությանը և քննադատության տեսությանը։ Առաջիկա տարիներին դրանց դասավանդումը նույնպես կշարունակվի և կզարգանա։ Վերջին տարիներին ունեցել ենք նաև բակալավրիատի «Գրականագիտություն» խմբում վարվող մասնագիտական նոր դասընթացի ներդրում։ Թարմացման նոր առաջարկ ստանալու դեպքում պատրաստ ենք կազմելու նոր դասընթացներ։

Ամբիոնը զգալի աշխատանք է անում ավարտական աշխատանքների թեմաների առաջադրման և որակյալ ղեկավարման առումներով։ Ավարտվող ուսումնական տարում մեր ամբիոնում ավարտական աշխատանք գրող ուսանողների կեսից ավելին՝ վեց հոգի, ստացել է 20 գնահատական։ Շարունակելու ենք առաջադրել թարմ, արդիական թեմաներ խորհրդային շրջանի, սփյուռքահայ և ժամանակակից հեղինակների ստեղծագործությունների մասին և հետամուտ լինել դրանց գիտական մշակմանը։

Շարունակելու ենք աշխատանքը մագիստրոսական ծրագրի խորացման և արդյունավետ գործադրման ուղղությամբ։ Անցյալ տարի դիմորդների թվի շարունակվող նվազման պայմաններում անցանք մեկուկես տարի տևողությամբ «Հայ գրականություն» մագիստրոսական նոր ծրագրին, որի առաջին շրջանավարտները այս տարվա հունվարին բարեհաջող պաշտպանեցին մագիստրոսական թեզերը։ Առաջիկայում շարունակելու ենք երկրորդ կուրս փոխադրված ուսանողների դասավանդման և թեզերի պատրաստման աշխատանքները։ Նոր ծրագրի կատարելագործման նպատակով քայլեր ենք կատարելու ինչպես պահպանված դասընթացների ներքին բարելավման, այնպես էլ միավորման արդյունքում դուրս մնացած հին դասընթացները վերականգնելու, հնարավորության դեպքում՝ նաև նոր դասընթացներ մշակելու ուղիով։

Ամբիոնում առավել բարդ է ասպիրանտուրայի վիճակը։ Վերջին տասը տարիներին ունեցել ենք մի շարք ասպիրանտներ և հայցորդներ, որոնցից թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել միայն մեկը։ Ամբիոնի կադրային թարմացմանը սերտորեն առնչվող այս խնդիրը կարգավորելու նպատակով կատարում ենք գիտական և գործնական քայլեր, որոնք

կփորձենք շարունակել ավելի արդյունավետ։ Առաջիկա ամիսներին թեկնածուական ատենախոսությունը կպաշտպանի ամբիոնի ևս մեկ հայցորդ։
Բավական արդյունավետ է հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի գիտական գործունեությունը։ Գիտական հոդվածներից բացի՝ ամբիոնի աշխատակիցները աչքի են ընկնում հատկապես մենագրության ժանրում։ 2021 և 2023 հրատարակված իմ երկու մենագրություններից հետո ամբիոնի երկու պրոֆեսորներ ավարտեցին իրենց մենագրությունները։ Ժենյա Քալանթարյանի գիրքը արդեն հրատարակվել է, շուտով լույս կտեսնի նաև Արծրուն Ավագյանի գիրքը։ Առաջիկա տարիներին նոր մենագրություններով հանդես կգան դոցենտներ Ս. Գրիգորյանը, Ա. Արզումանյանը, Լ. Սեյրանյանը, ասիստենտ Մ. Ղազարյանը։
Ամբիոնի շարունակական լավ ավանդույթներից է մասնակցությունը հանրապետատան և միջազգային գիտաժողովներին։ Վերջին տասը տարիներին մեր ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է վեց գիտական նստաշրջան՝ երկու չարենցյան, երեք մաթևոսյանական և մեկ սևակյան։ Աշնանը լույս կտեսնի «Մաթևոսյանական ընթերցումներ» գիտական ժողովածուի 5-րդ հատորը։ Բարենպաստ հանգամանքների պարագայում կշարունակենք անցկացնել մեր ամբիոնի գիտական դիմագիծը բնութագրող չարենցյան և մաթևոսյանական ընթերցումները, ինչպես նաև մեկանգամյա գիտաժողովներ։ Հոկտեմբեր-նոյեմբերին կմասնակցենք Ռազմիկ Դավոյանի 85-ամյակին նվիրված գիտաժողովին, որ կազմակերպում է Համազգային հայ կրթական և մշակութային միությունը, ինչպես նաև արդեն մեր նախաձեռնությամբ կանցկացնենք բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանի 80-ամյակին նվիրված գիտական նստաշրջան։

Այնուհետև, ըստ ընթացակարգի, սկսվեցին ելույթները։
Բ. գ. դ., պրոֆեսոր Ա. Մակարյանը իր խոսքում նշեց, որ դոցենտ Գրիգորյանը ունի գիտական, մանկավարժական, մարդկային օրինակելի հատկանիշներ, որոնց շնորհիվ վայելում է գործընկերների և ուսանողների համակրանքը։
Բ. գ. դ., պրոֆեսոր Ա. Աբաջյանը ևս նշեց, որ արդեն տարիներ ամբիոնի վարիչի պաշտոնում աշխատող Ս. Գրիգորյանը իրեն դրսևորել է որպես գիտական գործի լավագույն կազմակերպիչ՝ ծավալելով նաև բեղուն գիտական գործունեություն։
Բ. գ. դ., պրոֆեսոր Ժ. Քալանթարյանն էլ նշեց, որ բացի լավ գիտնական ու ղեկավար լինելուց, Գրիգորյանը նաև հանրապետությունում ընդունված և հայտնի գրականագետ է։
Բ. գ. դ., պրոֆեսոր Յու. Ավետիսյանը, դոց. Ա. Գալստյանը ևս իրենց խոսքում բարձր գնահատեցին Ս. Գրիգորյանի գիտական, կազմակերպչական և մանկավարժական հատկանիշները՝ կոչ անելով քվեարկել թեկնածուի օգտին։

Ելույթներից հետո, համաձայն ընթացակարգի, փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Նարինե Դիլբարյան – նախագահ
2. Արամ Խաչատրյան
3. Գոհար Օհանջանյան

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո նախագահ, դոց. Նարինե Դիլբարյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա են եղել և քվեարկությանը մասնակցել են 26-ը:

Բաժանվել է 26 քվեաթերթիկ:

Քվեատուփում եղել է 26 քվեաթերթիկ:

Քվեարկությանն արդյունքներն են՝

Հ/Հ	Թեկնածուի ազգանուն, անուն, հայրանուն	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ
1.	Գրիգորյան Սեյրան Զավենի	23	2	1

Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ 1:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ բ. գ. թ., դոցենտ Սեյրան Զավենի Գրիգորյանին ընտրված համարել հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Միջնորդել համալսարանի գիտական խորհրդին՝ հաստատելու ֆակուլտետի գիտխորհրդի քվեարկության արդյունքները և խնդրել ռեկտորին, գործող կարգի համաձայն, ընտրված թեկնածուի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահներ բ. գ. դ. Թերեզա Շահվերդյանը և Հ. Որսկանյանը հարգելի պատճառով ներկա չեն նիստին, սակայն հաշվետվությունը ուղարկել են, և հայ բանասիրության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար Ա. Սարգսյանը ընթերցեց հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր.

2024-25 ուստարում «Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 27 ուսանող: Ութ ուսանող ստացել է 20 միավոր, մեկ ուսանող ստացել է 19 միավոր, հինգ ուսանող՝ 18 միավոր, հինգ ուսանող՝ 17 միավոր, մեկ ուսանող՝ 16 միավոր, մեկ ուսանող՝ 15 միավոր, երկու ուսանող՝ 14 միավոր, մեկ ուսանող՝ տասներեք միավոր, երկու ուսանող՝ 12 միավոր և մեկ ուսանող՝ 10 միավոր:

«Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 30 ուսանող: Տասը ուսանող ստացել է 20 միավոր, ութ ուսանող՝ 19 միավոր, հինգ ուսանող՝ 18 միավոր, երեք ուսանող՝ 17 միավոր, երեք ուսանող՝ 16 միավոր, մեկ ուսանող՝ 15 միավոր:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել: Պաշտպանության ներկայացված

ավարտական աշխատանքներն ընդհանուր առմամբ համապատասխանում էին ներկայացվող պահանջներին և գիտական չափանիշներին։

Աշխատանքներում, ըստ կանոնակարգային պահանջի, ներկայացված էին ուսումնասիրության նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ներկայացված էր համապատասխան գրականությունը, պահպանված էին նաև կառուցվածքային, տեխնիկական պահանջները։

Պաշտպանության ընթացքում ուսանողները ցուցադրում էին նաև աշխատանքի լուսապատկերային տարբերակը։

Պաշտպանությանը մասնակցած ուսանողները հիմնականում կարողանում էին ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, պատասխանել հանձնաժողովի հարցերին։

Ընդհանուր առմամբ ուսանողների մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, և թերի պատասխանները փոքրաթիվ էին: Ավարտական աշխատանքների թեմաները հիմնականում հաջող էին ընտրված։ Դրանք մեծ մասամբ արդիական էին, կային արդեն հայտնի թեմաների նորովի մեկնաբանություններ։ Նշենք, որ որոշ թեմաներ կարելի էր քննել նյութին առնչվող առավել ընդգրկուն համատեքստում։ Ցանկալի է, որ ուսանողները ցուցաբերեին ավելի շատ վերլուծական մոտեցում։

Ներկայացված աշխատանքների ընդհանուր որակը, ուսանողների պատրաստ-վածությունը վկայում էին, որ ավարտական աշխատանքների ղեկավարները և համապատասխան ամբիոնները իրենց աշխատանքը կատարել են անհրաժեշտ մակարդակով։ Աշխատանքներում հիմնականում պահպանված էին նաև տեխնիկական պահանջները։

Գրախոսները ևս իրենց կարծիքները ներկայացրին պահանջված չափանիշներին համապատասխան։ Գրախոսություններում հստակ նշված էին ավարտական աշխատանքներում առկա վրիպակներն ու թերությունները, արվեցին տեղին դիտարկումներ, որոնք, կարծում ենք, օգտակար կլինեն հետագայում գիտական այլ աշխատանքներ կատարելիս։

Պաշտպանության ընթացքում պահպանված էին ընթացակարգային պահանջները, որոնք վկայում են ֆակուլտետի դեկանի և դեկանատի աշխատակիցների բարեխիղճ աշխատանքի մասին։

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ.

Ա) ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Վարդուհի Արտաշեսի Բարսեղյանի** տարեկան ատեստավորման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ն. Դիլբարյանը, Վ. Պետրոսյանը և այլք։

Նշվեց, որ Վարդուհի Բարսեղյանը ուսումնական տարվա սեպտեմբերի 2-ից մինչև

փետրվարի 3-ը «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության գործողության շրջանակում ուսանել է Վենետիկի Կա Ֆոսկարիի համալսարանի Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի ուսումնասիրությունների ֆակուլտետում: Ուսումնառության ընթացքում այցելել է Վենետիկի Սուրբ Ղազար կղզի, ծանոթացել կղզու պատմությանը, միաբանության գիտական, գրական, մշակութային գործունեությանը: 2024 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 3-ը մասնակցել է Մխիթարյան Միաբանության մայրավանքում անցկացված միջազգային գիտաժողովին՝ նվիրված Մխիթար աբբահոր մահվան 275 ամյակին:

Նշյալ ուսումնական տարվա ընթացքում թեկնածուական ատենախոսության թեման մասնակիորեն փոփոխվել է: Դրանով պայմանավորված՝ կատարել է ատենախոսության կառուցվածքի փոփոխություն, ուսումնասիրել գրականության ցանկը, սկսել աշխատանքի հիմք հանդիսացող իմաստային դաշտերի քարտագրումը, ինչպես նաև կատարել որոշ եզրահանգումներ: Տպագրել է մեկ հոդված, տպագրության է պատրաստում երկու նոր հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Վարդուհի Արտաշեսի Բարսեղյանին ատեստավորել:

Բ) ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ **Գայանե Դալլաքյանի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Տեր-Մինասյանը, Թ. Տոնոյանը, Մ. Ֆալաքյանը և այլք:

Նշվեց, որ Գայանե Դալլաքյանը ասպիրանտական 3 տարիների ընթացքում չի դրսևորել գիտական անհրաժեշտ պատրաստականություն և պարտաճանաչություն և չնայած ամբիոնի մշտական հորդորներին և ներողամիտ վերաբերմունքին՝ ատենախոսության թեմայի վերաբերյալ որևէ աշխատանք և ուսումնասիրություն չի ներկայացրել գիտական ղեկավարին: Ուսումնառության տարիների ընթացքում որևէ գիտական հոդված չի պատրաստել, որևէ շարադրանք չունի: Ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում դարձյալ որևէ նոր բան չի արել, ղեկավարի հետ չի հանդիպել: Ասպիրանտական ժամկետի ավարտին մնացել է 6 ամիս, իսկ Գ. Դալլաքյանը աշխատանքի վերաբերյալ գիտական հրապարակում կամ գոնե որևէ նյութ չունի:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ Գայանե Դալլաքյանին չատեստավորել:

Գ) **ԼՍԵՑԻՆ** Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Զանկե Լոնի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ն. Դիլբարյանը, Վ. Պետրոսյանը և այլք:

Նշվեց, որ **Զանկե Լոնը** սկսել է թեզի սկզբնաղբյուրների հավաքման և հանգամանալի մշակման աշխատանքները: Հավաքել է հայերեն, չինարեն և անգլերեն տեսական

գրականության ցանկը անհրաժեշտ մեկնագրություններով, հոդվածներով և բառարաններով: Սկսել է դրանք ուսումնասիրել: Այժմ աշխատում է համապատասխան լեզվամշակութային շտեմարան կազմելու ուղղությամբ՝ հայոց և չինական:

Տպագրության է պատրաստում 2 հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Զանկե Լոնին** ատեստավորել:

Դ) **ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ **Արևիկ Գառնիկի Խամոյանի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Տեր-Մինասյանը, Թ. Տոնոյանը, Մ. Ֆալաքյանը և այլք:

Նշվեց, որ աշնանային և գարնանային կիսամյակներում Արևիկ Խամոյանը մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված պարտադիր և կամընտրական դասընթացներին՝ հավաքելով 21 կրեդիտ:

Արևիկ Խամոյանի ատենախոսության թեման է «Թվային գովազդի լեզուն»: Ուսումնասիրում է ատենախոսության թեմայի հետ կապված նյութեր. մշակվել է աշխատանքի կառուցվածքը, կատարվել է քարտագրում: Տպագրության է պատրաստում առաջին հոդվածը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ Արևիկ Խամոյանին ատեստավորել:

Ե) **ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Կամո Անթերանիկի Էբրահիմի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը և այլք:

Նշվեց, որ **Կամո Անթերանիկի Էբրահիմը** ուսումնասիրել է ատենախոսության վերաբերյալ գրականությունը, ամբողջությամբ քարտագրել է անհրաժեշտ նյութը, կատարել դասակարգումներ, համեմատել հայերեն և պարսկերեն փոխառյալ կենդանանունները:

Շարադրել է ատենախոսության առաջինն երկրորդ գլուխները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Կամո Անթերանիկի Էբրահիմին ատեստավորել:

Զ) **ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ **Ամալյա Հունանի Հարությունյանի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Տեր-Մինասյանը, Թ. Տոնոյանը, Մ. Ֆալաքյանը և այլք:

Նշվեց, որ աշնանային և գարնանային կիսամյակներում Ամայա Հարությունյանը մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված պարտադիր և կամընտրական դասընթացներին՝ հավաքելով 21 կրեդիտ:

Ամալյա Հարությունյանի ատենախոսության թեման է «Գրաբար-միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները հայերենի անվական համակարգում»: Ուսումնասիրում է ատենախոսության թեմայի հետ կապված նյութեր. մշակվել է աշխատանքի կառուցվածքը, կատարվել է քարտագրում: Տպագրության է պատրաստում առաջին հոդվածը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ Ամալյա Հարությունյանին ատեստավորել:

Է) **ԼՍԵՑԻՆ** – ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի առկա ասպիրանտ Հովհաննես Հովակիմի Հովակիմյանի տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. պրոֆ. Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը և այլք:

Նշվեց, որ Հովհաննես Հովակիմյանը մասնակցել է պարտադիր և կամընտրական դասընթացներին, հանձնել է ստուգարքները: Ատենախոսության թեմայի վերաբերյալ կատարել է հետազոտական աշխատանքներ: Հրատարակել է երեք հոդված, որից մեկը՝ միջազգային գիտական ամսագրում: Ատենախոսությունը շուտով ամբողջությամբ շարադրված կլինի և կներկայացվի պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի առկա ասպիրանտ Հովհաննես Հովակիմի Հովակիմյանին ատեստավորել:

Ը) **ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Աշոտ Մկրտչի Մկրյանի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. պրոֆ. Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Վ. Եղիազարյանը, Ա. Ջրբաշյանը և այլք:

Նշվեց, որ Աշոտ Մկրյանը ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում մասնակցել է ասպիրանտուրական դասընթացների՝ հավաքելով անհրաժեշտ կրեդիտները, Ասպիրանտը ուսումնական տարվա ընթացքում կազմել է թեկնածուական ատենախոսության հետազոտական ծրագիրը, կառուցվածքը, ուսումնասիրել գրականության ցանկը և անհրաժեշտ նյութերը: Տպագրության է ներկայացրել մեկ հոդված, պատրաստում է երկրորդը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ Աշոտ Մկրյանին ատեստավորել:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ.

ԼՍԵՑԻՆ– Հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի 2024-25 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարներ պրոֆ., պրոֆ. Յու. Ավետիսյանի, Ա. Աբաջյանի, Ս. Գրիգորյանի, դոց. Ա. Սարգսյանի հաշվետվությունները կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, Ս. Գրիգորյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Ա. Սարգսյանը, Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ «Հայոց լեզու և գրականություն» բակալավրի կրթական ծրագրում իրականացվել են ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգով հաստատված փոփոխություններին վերաբերող աշխատանքները, ծրագրի կազմակերպումն ու իրականացումը պատշաճ մակարդակի վրա են: Ֆակուլտետում գործող մագիստրոսական ծրագրերը՝ **«Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն», «Հայ գրականություն»,** իրականացվում են 1,5 տարում, ծրագրերում ներառված դասընթացները դասավանդվում են պատշաճ մակարդակով՝ ապահովելով անհրաժեշտ վերջնարդյունքները: Մշտադիտարկման արդյունքներով ճշգրտվում են ծրագրերում ներառված դասընթացների դասավանդման որակը, դրանց տեսագործնական արդյունավետությունը:

Աշխատաշուկայի հետ կապը զարգացնելու նպատակով մագիստրոսական ծրագրերի՝ 2024-2025 ուստարվա ուսումնական պլանում մշակվել և ներդրվել են նոր դասընթացներ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Արձանագրել, որ հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարները բավարար կերպով կատարել են ուսումնական գործընթացի կազմակերպման կարգով նախատեսված աշխատանքները:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ ԼՍԵՑԻՆ – Բ. գ. թ. Արա Սմբատի Զարգարյանի՝ «Եղիշե Չարենց. կերպար և նախակերպար» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Ա. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց., դոց., Ա. Գալստյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Ա. Զարգարյանի՝ «Եղիշե Չարենց. կերպար և նախակերպար» աշխատանքը նոր դիտանկյունից է բացահայտում Եղիշե Չարենցի ստեղծագործության վերջին շրջանը՝ ընդգծելով կերպարի և նախակերպարի փոխհարաբերության խորության և բազմաշերտության կարևորությունը: Ուսումնասիրության առանցքում Չարենցի չափածո գործերն են՝ գրված 1930-ականների կեսերին, երբ գրողի գրական մտածողությունը հասել էր իր փիլիսոփայական ու գեղարվեստական հասունության գագաթնակետին: Ներկայացվող նյութում կերպարի և նախակերպարի մեկնաբանությունը բացահայտվում է որպես ստեղծագործական ինքնատիպ մեխանիզմ. կերպարը երբեք ուղղակի արտացոլանք չէ իրական նախատիպի, այլ հեղինակային վերափոխման ենթարկված խորհրդանշային ամբողջություն է: Դրանք կարող են ունենալ կենսագրական, պատմամշակութային և ներանձնական հիմքեր՝ միաձուլվելով ու վերաճելով համամարդկային ու համազգային խորհրդանիշների: Ուսումնասիրության մեջ առանձնահատուկ շեշտադրվում է Չարենցի ինքնապատկերման երևույթը՝ որպես գեղարվեստական գործընթաց: Դիտարկվում է, թե ինչպես է գրողը կերպարի մեջ ներառել սեփական «ես»-ը՝ վերապրումներն ու

փիլիսոփայական որոնումները վերածելով համընդհանուր տագնապի և հոգևոր դիմադրության արտահայտման: Այդ կերպարները հանդես են գալիս նաև որպես ժամանակի խորհրդանշական արտացոլումներ՝ լեցուն ներքին դրամատիզմով, գոյաբանական հարցադրումներով, ազգային հիշողության տարրերով:

Ուսումնասիրության մեջ Չարենցի վերջին շրջանի գրականությունը դիտարկվում է ոչ միայն գեղարվեստական ժառանգության, այլև ժամանակի ու մշակույթի հետ մշտական երկխոսության համատեքստում:

Սույն ուսումնասիրությունը մի կողմից բացահայտում է Չարենցի ստեղծագործական խորաթափանց մտածողությունը, իսկ մյուս կողմից հղում է դառնում մեր ժամանակի գեղարվեստական ու հոգևոր հարցադրումների պատասխանների որոնման գործում: Չարենցի պոեզիան, ըստ ուսումնասիրության հեղինակի, վեր է հառնում որպես ազգային փորձառության և մշակութային դիմադրության խորհրդանիշ՝ ներկայանալով որպես ժամանակից դուրս ձայն, որը, սակայն, շարունակում է մնալ ժամանակի սրտում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Բ. գ. թ. Արա Սմբատի Զարգարյանի՝ «Եղիշե Չարենց. կերպար և նախա-կերպար» գիրքը երաշխավորել տպագրության:

բ/ ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Լիլիթ Պապիկյանի «Գեղամ Սարյանի չափածոյի խոսքարվեստը» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Ա. Տեր-Մինասյանը, ասիստ. Լ. Մելքոնյանը և ուրիշներ:

Նշվեց, որ գիրքը արդիական է և արժեքավոր քննվող հարցերի շրջանակով ու վերլուծություններով, կարևոր նշանակություն ունի ոճագիտության, մասնավորապես հեղինակային մշակումների լեզվաոճական քննության առումով, քանի որ ստեղծագործական աշխատանոցին վերաբերող լեզվական ուսումնասիրություններ մեզանում գրեթե չկան: Քննության առումով Գ.Սարյանի չափածոյի խոսքարվեստը հեղինակին տվել է հնարավորություններ ստեղծագործությունների լեզվական, ոճական միջոցները վերհանելու, և գրքի հստակ կառուցվածքը դրա վկայությունն է: Գիրքը օգտակար կարող է լինել ոճագիտության հարցերով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն շրջանակների համար: Գրքի խմբագիրն է բ. գ. թ., դոց. Անահիտ Ադիլխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Լիլիթ Պապիկյանի «Գեղամ Սարյանի չափածոյի խոսքարվեստը» գիրքը երաշխավորել տպագրության:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ